

ըլլալ. բայց ափսոս որ ավետալի պատերազմին պատճառաւ խիստ շատ վնաս քաշեց մատենադարանը ու շատ տեղերն ու գրքերը այրեցան, անանկ որ շատ չանցաւ Աերապիոնն ալ բոլորովին կործանեցաւ : Արողիոս, որ 410<sup>հն</sup> Արդեքսանդրիա գնաց, հոն ոչ մատենադարան գտաւ և ոչ Աերապիոն :

Իսկէ վերջը Ազեքսանդրիոյ վարժարանը սկսաւ ծաղկիլ, բայց ոչ ոքի պատմաբանից նոր մատենադարանի բացուիլը կը յիշատակէ . բայց հաւանական կ'երեայ որ հաւաքուած ըլլան հոն քանի մը աստուածաբանութեան կամ վիճաբանութեան գրքեր, քրիստոնեայ մատենադիրներուն գրուածները . կարելի է ալ որ անդիէն ասդիէն քանի մը երեկի հեթանոս մատենադրաց գրուածներն ալ հոն ժողվուած ըլլան :

Այս ատեններս էր որ մեր Հայոց Ուարգմանիցքն եկան Ազեքսանդրիա աղէկ յունարեն սովորելու և այն գրքերն քննելու :

640<sup>հն</sup> Ազեքսանդրիա 13 ամիս պաշարած մնալէն ետքը Արաբացիներէն առնուեցաւ . Վաղիւլֆարաձ պատմագիրը կ'ըսէ թէ Ազեքսանդրիոյ քերականներէն Յովհան Փիլոփոն անունով մէկը աղաչեց Արաբացւոց Վմբու զօրավարին որ մատենադարանին վնաս չհացցնէ : Վմբու կ'ուզէր քերականին խընդիւքը կատարել, բայց ( Ճար Վմբրապետին այս բանիս վրայ հարցուց, ան ալ պատասխան տուաւ . “ Ուէ որ Յունաց գրքերը մեր դուրանին համաձայն են՝ աւելորդ են, և պէտք չէ պահել. իսկ թէ որ դէմ կը խօսին, վնասակար են և պէտք է այրել . ” : Այս հրամանիս հնագանդելով զօրապետը, կ'ըսէ պատմիչը, մէկէն գրքերը բաժնել տուաւ քաղաքին 4000 բաղնիքներուն, ու վեց ամիս բաղնիքները տաքցնելու գործածուեցան : Բայց Վաղիւլֆարաձը այս դիալուածէս 700 տարի վերջն է : Յոյն մատենադիրները որ Ազեքսանդրիոյ առումը կը պատմեն, ինչպէս է Կատիքիոս պատրիարքը, ամենին բան մը ըսէր մատենադարանին այս կերպով

կործանմանը վրայ : Իսոր համար շատի մաստունք չեն հաւատար Վաղիւլֆարաձին պատմածին : Եւ իրաւցընէ անհաւատալի է որ քանի մը հազար գիրք Արդեքսանդրիոյ 4000 բաղնիքները վեց ամիս տաքցնելու բաւած ըլլան :

Արով բանիւ մատենադարանը 390<sup>հն</sup> այրած ըլլալով իրեն նորէն շինուելուն վրայ աւանդութիւն մը չկայ պատմութեանց մէջ . ասկէց զատ Կատիքիոսին ու Արողիոսին վկայութեանց ալ նայելով Վաղիւլֆարաձին պատմածը յայտնի չափազանցութիւն է :

( ՄՆՍՑԱԽ ՈՒՐԻՇ ԱԿԴԱՄ )

### Տ' ՆՏԵՍ ԱԿԱԽ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ԳԼՈՒԽ Թ.

Պարուասուուր . — Ա արդակուուր . — Ժողացաւ :

ԿՈՎՈՒ պատուաստին գիւտէն առաջծաղկին վնասներէն գոնէ քիչ մը ազատ մնալու մտքով հասարակ պատուաստը կը գործածէին : Վս գործողութիւնը արևելքի մէջ շատ ատենէ 'ի վեր սովորական բան մըն էր, բայց դեռ մէկ եւրոպացի մը իր վրայ կամ իր զաւակացը վրայ անոր փորձը ընելու չէր համարձակած : Պօլիս կեցող անգղիացի դեսպանին կինը Էտի Վոնթակ ամենէն առաջ աս բանիս սիրտ ըրաւ . նախ իր որդին պատուաստել տուաւ, ու երբոր տեսաւ որ յաջողեցաւ, Լ մնտրա դառնալէն ետքը իր աղջիկը պատուաստել տուաւ 1721<sup>հն</sup> : Վն ատեն բժշկական դպրոցը ուզեց որ 'ի մահ դատապարտուած վեց յանցաւորի վրայ անոր փորձը ընեն : Վն փորձը ամենայն կերպով յաջողեցաւ ու շուտ մը Կալէսի իշխանուհին իր զաւկըները պատուաստել տուաւ : Ուէպէտ և աս գործողութեան

վրայ հողանոտա , Շուէտ ու բոլոր Դերմանիա համարմունք մտաւ , բայց Դաղղիոյ մէջ շատ հակառակորդներ ունեցաւ , ինչուան որ 175 Են ( Կալէանի դուքսը , որ Լուի-Ֆիլիփ թագաւորին պատճի էր , իր զաւկըները պատուաստել տուաւ . և աս մեծ քաջութիւնը մեծ բարեգործութիւն ալեզաւ ամենուն . վասն զի ան օրէն ծաղկի պատուաստը քանի զնաց ընդունելի եզաւ ինչուան որ ծաղկի հիւանդութենէն բոլորովին ազատ մնալու հնարքը գտնուեցաւ :

Օ արմանալին աս է որ ինչուան հիմա ալ քանի մը գեղերու մէջ տգէտներ կը զտնուին որ պատուաստին օգուտը կ'ուրանան . և այնպիսի անգութ ծնողք ալ կը գտնուին որ աւելի կ'ընտրեն իրենց զաւկըները մեծամեծ վտանգներու ու սոսկալի վնասներու մէջ ձգել , քան թէ աս պատուական զիւտը իրենց օգտին բանեցընել : Ի յնպիսիներուն ցաւելով կ'ըսենք , գուք այս ճամբով Ի ստուծոյ ազնիւ արարածին կեանքը վտանգի մէջ կը դնէք . որ մը պատասխան պիտի տաք գերագոյն դատաւորին ձեր յամառութեանն ու կուրութեանը համար :

Որպէս զի կովու պատուաստին դէմ գտնուած սուտ կարծիքները բոլորովին վերցուին , գնենք հոս ան հարցմունքներն որ սովորաբար բժիշկներու կ'ըլլուին , և անոնց պատասխանն ալ յըտակ կերպով տանք :

Թ . Ո՞ր բարեխին մէջ պէտք է պատուաստել : — Իմէն տարիքին . վասն զի մարդս իր կեանքին մէջ ամէն ատեն կրնայ ծաղկէն բոնուիլ . բայց աս յայտնի է որ որչափ տղաք պատիկ ըլլան , այնչափ աւելի հաստատուն ու ապահով կ'ըլլայ պատուաստը : Ի զէկ ատենն է տղուն 2 կամ 3 ամսուան եղած ժամանակը . իսկ ծաղկի ատեն աւելի ալ շուտ ընել տալու է :

Է . Հարւոյն որ եղանակը աւելի յարմաք է պատուաստի : — Իմէն եղանակի մէջ պատուաստ կրնայ ըլլալ , մանաւանդ ծաղկի ատեն . իսկ թէ որ փութալու

հարկ ըլլայ , կրնաս գալնան կամ աշնան սպասել , որ ոչ ցուրտ և ոչ տաք ըլլալով՝ աւելի աղէկ կը բռնէ պատուաստը :

Դ . Պատուաստելու աշու Նրայ ի՞նչ պատուաստելուն էայ ընելու : — Իմենէն աղէկ պատրաստութիւնն է որ տղուն գործարանները առողջ ըլլան . թէ որ տղան աղէկ առողջ է , երբ որ կ'ուզես՝ առանց վախի պատուաստել տուր . իսկ թէ որ հիւանդ է , պէտք է բժշկին խօրհուրդ հարցընել . բայց շատ անգամ պատուաստը գեղի աւել ալ կը բռնէ զարմանալի կերպով :

Ե . Պատուաստելու էերու ո՞ն է : — Իմենէն աղէկն ու սովորականը աս է որ նշտրակով մը տղուն երկու թեին վրայ երկու իրեք ծակ կը բանան ու պատուաստի շարաւը նշտրակին տափակ ծայրը զրած՝ ան ծակերուն մէջ կը խօսեն : Եայելու է որ գործիքը քովընտի ու խիստ քիչ ներս մտնէ , այնպէս որ կաշիին ու վերնամաշկին մէջտեղը մնայ , անկեց վար չամցնի : Որչափ ալ մէկը զգուշութիւն ընէ , քիչ կը պատաշի որ կտոր մը արին չելլէ . բայց ասիկայ մեծ պակասութիւն մը չէ , ու ամենելին պատուաստին բռնելուն արգելք ըներ , թէպէտ զգուշանալը լաւ է : Պիտք եղած ատենը թէ որ մէկը նշտրակ չգտնէ , կրնայ նաև զմելինի ծայրովը և ինչուան նաև գնտասեղով մը նոյն գործողութիւնը կատարել :

Ը . Պիէտք է պատուաստելոց պահեցողաւուն ընել բալ , այսինքն էերու էտրել : — Պատուաստը հիւանդութիւն չէ , ուստի պահեցողութիւն ընելը անօգուտ է . նոր պատուաստուող տղան պէտք է տաք կենայ ըսելով , գտած հագուստնին վրան դիզելը պարզ նախապաշարմանք մըն է . վասն զի պատուաստին ամենելին հիւանդութիւն մը չկրնար առաջ գալ : Շատ անգամ տղաք և ոչ կ'իմանան թէ իրենց ինչ ըրին :

Զ . Պատուաստի նիւթին մէջ բարեխուուն է կայ : — Այրերը միշտ կ'ապըս պրեն պատուաստողներուն որ պատուաստի նիւթերնին աղէկ ըլլայ . ասիկայ

նախապաշտրմունք է . վասն զի պատուաստի նիւթը մէկ տեսակ միայն է որ թէ բորոտ տղէ առնուած ըլլայ և թէ որքիւնոտ<sup>1</sup> , գոնջ<sup>2</sup> և թէ խոյլ<sup>3</sup> ունեցող տղէ , ամէնն ալ մէկ է , բնութիւնը չի փոխեր . վասն զի իրը և թարախ՝ ամէն տեսակ այլայլութէ ազատ կը մնայ : ( Ծրինակ մը չկայ որ ամէն տեսակ՝ ինչուան փոխազդրական ու ժառանգական հիւանդութիւններով լեցուած տղէ մը առնուած պատուաստը ուրիշ պատուաստներէն տարբերութիւն ունենայ : Տարակոյս չկայ որ մայր մը երբ որ կ'ուզէ որ աս կամ ան տղէն առնուի իր զաւակացը պատուաստը , անոր կամքը կատարելը վնաս մը չունի . բայց հարկ եղած ատենը պէտք է առանց տարակուսելու ոտքի տակ առնելաս նախապաշտումը . ապա թէ ոչ կրնայ ըլլալոր ամբողջ ժողովրդեան մը մահուանը պատճառ ըլլայ մարդ համաձարակ հիւանդութեան ատեն :

Է . Պատուաստի նիւթը ի՞նչողէս է պահուի : — Խմէպէտ շատ հնարք կայ պատուաստի նիւթը պահէլու , սակայն ամենէն աղէկին աս է , որ նիւթը երկու հատ մէյմէկ բթաշափ ու տափակ ապակիի մէջ տեղը կը դնեն ու մեղրամնով ան ապակիները իրարու հետ կը փակցընեն . անով պատուաստը օդ չառներ , մաքուր կը մնայ ու դիւրաւ ալ կը բռնէ :

Ը . Երէու անգամ պատուաստէլու հարէ ի՞յ Աէ չէ : — Հարկ չկայ , բայց ըլլայ նէ ալ զէն չի տար . աս փորձուած է որ պատուաստուողներուն մեծ մասը բոլորովին ազատ կը մնան ծաղկէ . և թէ որ քանի մը զիպուած ալ պատահէր է որ նորէն բռնուեր են՝ հաշուի չգար . սակայն թէ որ մէկը իր սիրտը հանգչեցընելու համար կրկին անգամուղենայ պատուաստել , ինչպէս որ ըսինք , ամենէն վնաս չտար :

Թ . Երա՞ ան խօսքն որ ի՞սուն Աէ պատուաստի նիւթը է չը ոչտանայ : — Ի՞ս իլնա-

դիրը , որ վերինին հետեանքն է , անող պէս ալ անհիմն է : Պատուաստի նիւթը ոչ երբէք կը տկարանայ : Խակ թէ որ պատուաստ առնողներէն ոմանք ծաղիկէ բանուին , անիկայ հաշուի չգար ըսինք , վասն զի խիստ քիչ հանդիպելուն համար կարգէ գուրս զիսպուած կը սեպուի , ու պէտք չէ ամեններն լսողներուն միտքը անովլ չփոթի :

Ժ . Բայտէներուն շատ համ Գէ ըլլալը պատուաստին զօրութեանը վրայ առըբերութիւնն է՝ չնէ Աէ չէ : — Ի՞մեննեին . հարկ եղած ատենը , պատուաստելու համար մէկ ծակ մըն ալ բաւական է . շատ ընելին պարզ ապահովութեամ համար է որ մէկը չէ նէ մէկալը բռնէ . շատ մարդ եղած է որ վրանին ամեննեին զրսէն պատուաստի նշան չէ երեցած , և սակայն հիւանդութենէ զւոնուեցան . բայց ապահովն է անանկ ատեն նորէն պատուաստելը :

Դ . Արդախոր : — Ա արգախտը մորթի բորբոքում մըն է որ օդին մասնաւոր փոփոխութէն առաջ կու գայ ձմեռուան վերջերն ու գարնան ատեն : Ա արդախտը թէ համաձարակ է և թէ փոխազրական : Ա արդախտին նշաններն ասոնք են . բոլոր մարմինը լայն լայն կէս կլոր ձեւով բիծեր գուրս կու տայ , թպառաջքը ու քթին ծակերուն թաղանթը թեթե կերպով մը կը տաքնան , կը ծարաւի հիւանդը , ու ժէ կ'իյնայ , ու տաքութիւն և ջերմկ'ունենայ : Ի՞ս դիպուածները խիստ կը սաստկանան երրորդ կամ չորրորդ օրը : Կծու ջուր մը կը վազէ հիւանդին աչուլներէն , կը հազայ ու անգաղար կը փանգտայ , ջերմը սաստիկ կ'ըլլայ ու երբեմն նաև կը ցնորի<sup>4</sup> :

Երբոր վարդախտը պարզ է , հանգիստ կենալով , պահեցողութիւն ընելով , ու մեղմացընող ըմպելիներ առնելով շուտով կ'անցնի : Կիծերը կը գեղիննան , մորթին վերնամաշկը թեփի պէս կը փշրի կը թափթըրի , և իններորդ օրը ամէն բան կը լմիննայ : Բայց

1 ՏԱ . Թէմէկէիւ : 2 ՏԱ . Գէւ :

3 ՏԱ . Սլուշաւ :

4 ՏԱ . Սուշտեւաւ :

Հիւանդութեան ատեն ու Ետքը 15  
կամ գէթ ութը օր սաստիկ զգուշանա-  
լու է պաղէն ու խոնաւութենէ . ապա  
թէ ոչ հիւանդութիւնը կը կրկնէ աւե-  
լի սաստիկ կերպով :

Հանկարծական պաղիլ մը , արտա-  
շընչութեան յանկարծակի կտրուիլը  
կրնայ ջրգողութիւն պատճառուել :

Ի՞ս հիւանդութեան մէջ ամէն բանէ  
առաջ պէտք է ներսի տաքութիւնը  
դուրս քաշել ու մարմինը տաք պահել ,  
ուստի պէտք է հիւանդը տաք ջրի ու  
գոլորշիքի մէջ դնել , և թեթև ու մեղ-  
մացընող անոյշ ըմպելիներ խմցընել ,  
բայց միշտ տաք :

Դ . (Փողացաւ) : — Փողացաւին պատ-  
ճառն է բերնի ետևի կողմի շնչափողին  
ու մեծ շնչերակին տաքութիւնը : Հի-  
ւանդը կը գանգատի որ կոկորդը սաս-  
տիկ կը ցաւի , բան մը չկրնար կլել ,  
դժուարաւ շունչ կ'առնէ ու կարծէ թէ  
պիտի խղդուի :

(Ընէ) որ բորբոքումը չմեղմանայ , կո-  
կորդին ներսի կողմը կը բշտի կ'ուռի ,  
և մէյմը որ սկսի թարախ կապել՝ թէ  
որ ինքիրեն չծակի , մէկ կողմը ծակե-  
լով թարախը որ վազցուի , մէկէն հի-  
ւանդութիւնը կ'անցնի : Ի՞նդհակառակին  
թէ որ թարախը չկարենայ վազել , բոր-  
բոքումը կը տարածուի , ծակերը կը գո-  
ցուին ու հիւանդը կրնայ խղդուիլ :  
Այսպիսի բորբոքման պատճառներն են  
չափէ դուրս պաղ օդ առնելը , տաքցած  
ատեն սառով ըմպելիներ խմելը , կոկոր-  
դին մէջ օտար բան մը խրիլը , սաստիկ  
պուալը , երգելը , ու երկայն ատեն  
բարձրաձայն կարդալը : Ի՞ս կոկորդի  
բորբոքումը կրնայ կուրծքի հիւանդու-  
թեան ալզարնել :

Ի՞ս հիւանդութիւնը շատ կ'ունենան  
դիւրագրգիռ մարդիկ ան եղանակնե-  
րուն մէջ որ օդը փոփոխական է , և ան  
երկիրները ուր որ օդը յանկարծ մէյմը  
տաք , մէյմը չոր ու մէյմը խոնաւ կ'ընէ .

նոյնպէս նաև ձմեռ ատեն ու լեռներու  
ծայրերը , ուր որ շալտնակ պաղ օդ կը  
զարնէ կոկորդին , ինչպէս նաև ցած ու  
խոնաւ տեղեր :

(Ընէ) որ փողացաւը սաստիկ չէ , գի-  
նիկ ու որ և իցէ գրգռող ըմպելիներէ  
պէտք է զգուշանալ , անոնց տեղը կա-  
կըցընող ու թանձը ըմպելիներ խմելու  
է , անով կ'անցնի : Ո՞ւ , թէ որ սկսի  
ծանրանալ , պէտք է պահեցողութիւն  
ընել ու արիւն առնել : Շատ անգամ  
ընդհանուր արիւն առնել մը ըրաւեր ,  
հարկ է նոյն տեղէն առնել . ուստի ան  
ատեն պէտք է տասնը հինգ կամ քսան  
տղուուկ կպցընել վզին վարի կողմը ան-  
րակին վրայ ու կուրծքին վերի գին :

Տգրուկները իյնալուն պէս , պէտք է  
ծակերուն վրայ թեթև , գաղջ ու կա-  
կըցընող սպեղանի՝ դնել , որ չափա-  
ւոր տաքութեամբը արեան վազելուն  
կ'օգնէ , ու տաքութիւնը կ'անցընէ :

(Ընէ) որ բորբոքումը կոկորդին նշանն  
խոյլերուն վրան է , թէ որ խոյլերը սկը-  
սին բշտիլ և կամ այնչափ ուռին որ ին-  
շուան խղդելու վախ տան , ան ատեն  
պէտք է վիրաբուժական գործողութիւն  
մէկ տեղ մը ծակել որ թարախը վազէ  
և կամ ուռած կտրիները կտրելու է :

Իմենէն աւելի այսպիսի հիւանդու-  
թեանց մէջ պէտք է մաքուր օդ ծծել  
ու ապականեալ օդէն վախնալ , որ կըր-  
նայ երբեմն ինչուան քաղցկեզ կամ կեր-  
ցաւ պատճառել :

(Ընէ) և իցէ մարդու իր ձախորդու-  
թեանց վրայ խօսք մի բանալ թէ որ  
կամք չունիս ու չես կրնար իրեն օդնե-  
լու ապա թէ ոչ անխոչեմութիւն է  
իր կամացը դէմ խօսք բանալով՝ զինքը  
անհանգիստ ընել :

Քացախը քանի թունա (բարձր) ըմպ . իր ամանը կը  
ճարպացնի :  
Քուի (կու) ինչ վէճն (հագ) այ թէ մուլ  
թանկ այ :